Վաղատուր

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 102 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 37 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ:
Վաղատուրը (նախկինում՝ Բայանդուր) գյուղում 1905-1910թթ.՝ բնակություն են հաստատել հայ-թուրքական ընդհարումների հետևանքով Մինքենդ գյուղից արտագաղթած հայերը: Վաղատուրից քիչ հեռու կա 17-րդ դարի եկեղեցի, որից կարելի է ենթադրել, որ այն հիմնադրվել է միջնադարում: Վաղատուրում են ծնվել Շմավոն Առուշանյանը (ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահ) և «Պրավդա» թերթի ճանաչված թղթակից Արամայիս Սարգսյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2275 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2057 հա, որից՝
- վարելահող՝ 394 հա, բազմամյա տնկարկ՝ 21 հա, խոտհարք՝ 73 հա, արոտ՝ 1034 հա, այլ հողատեսք՝537 հա
- բնակավայրերի հողեր՝ 47 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 7 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3 հա,
- անտառային հողեր՝ 155 հա, որից անտառածածկ՝ 155 հա
- ջրային հողեր՝ 3 հա